

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
ԱրՊՀ ռեկտորի 2011-2012 ուս. տարվա

ԼՂՀ Մեծարգո վարչապետ, ԱրՊՀ Խորհրդի նախագահ,  
Խորհրդի հարգարժան անդամներ

Զեր ուշադրությանն է ներկայացվում 2011-2012թ. ուս. տարվա հաշվետվությունը:

Ինչպես գիտեք, ԱրՊՀ զարգացման ծրագիրը նախատեսված է 2009-2013 թվականների համար: Չնայած ծրագիրն ընդգրկում է նաև 2013թ., հաշվետվությանը զուգահեռ ներկայացրել ենք նաև նշված ծրագրի դրույթների կատարման մասին:

Հաշվետու տարում համալսարանում շուրջ 30 մասնագիտությամբ սովորում է 2938 ուսանող՝ բակալավրիատի ծրագրով, որից 1616-ը՝ առկա, 1322-ը՝ հեռակա ուսուցմամբ: Առկա ուսուցմամբ սովորող ուսանողներից 604-ը ընդգրկված են պետպատվերի շրջանակներում:

Մագիստրոսական ծրագրով ուսանել է 527 մագիստրանտ, որից 428-ը՝ առկա, 99-ը՝ հեռակա ուսուցմամբ: Պետպատվերի համակարգում ընդգրկված է 203 մագիստրանտ: Համալսարանում սովորում են 62 ասաբիրանուններ:

Նշեմ, որ զարգացման ծրագրի ընդունման նախօրյակին ուսանողների թիվը հասնում էր 4610-ի: Ուսանողների թվի կտրուկ նվազումը հետևանք է նաև՝ ագրարային ֆակուլտետի տարանջատման (որի հիման վրա ստեղծվել է Հայաստանի ագրարային համալսարանի մասնաճյուղը), ապա՝ 2011թ. առկա բաժնում ընդունելություն չկատարելու, ինչպես նաև համալսարանի առջև դրված առաջնային խնդիրների լուծման պատճառով, այսինքն՝ որակ, ոչ թե քանակ: Այս առումով համալսարանից

հեռացվել են զգալի թվով ուսանողներ: Ուսման վճարը չմուծելու պատճառով չի հեռացվել ոչ մի ուսանող:

Մեր կարծիքով՝ համալսարանը՝ 3-3.5 հազար ուսանողությամբ, ամբողջովին համապատասխանում է մեր հանրապետության բնակչության և սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարներին:

Համալսարանում իիմնական հաստիքով աշխատում է 232 դասախոս, ժամավճարային իիմունքներով՝ 130, իսկ 225 աշխատողներ ընդգրկված են ուսումնաօժանդակ և տնտեսական ստորաբաժանումներում:

Համալսարանն ունի 5 մասնաշենք, որտեղ տեղավորված են ուսումնական գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար անհրաժեշտ ստորաբաժանումներն ու կառույցները՝ մարզադահլիճներ, գրադարանն՝ իր ընթերցասրահներով, ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած մասնագիտական կաբինետներ, լաբորատորիաներ, կենտրոններ, հրատարակչություն, տնտեսական օժանդակ կառույցներ և այլն:

Այս առումով պետք է նշեմ մեր ձեռքբերումները՝ կաբինետների և կենտրոնների՝ ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցումը: Եթե 2008թ. համալսարանն ուներ 1 շարժական պրոեկտոր, 256 կիլոբայթ հզորությամբ համացանց, ապա այսօր համալսարանի 16 մասնագիտական կաբինետներում տեղադրված են մշտական գործող պրոեկտորներ, իսկ համակարգիչների թիվը հասնում է շուրջ 200-ի: Համալսարանի համացանցի հզորությունը հասնում է 6000 մեգաբայթի, որը հնարավորություն է տալիս կազմակերպվող միջոցառումները ներկայացնել միջազգային հանրությանը:

Այս ամենը ծառայում է մեկ գլխավոր նպատակի՝ ժամանակի պահանջներին համապատասխան գիտելիքներով և ունակություններով, ինչպես նաև հստակ քաղաքացիական դիրքորոշում ունեցող, հայրենասեր երիտասարդ մասնագետների պատրաստմանն ու դաստիարակմանը:

Արցախի պետական համալսարանն, ըստ Էության, չի կարող մասնագետներ պատրաստել հանրապետության համար պահանջվող բոլոր ոլորտների համար: Ընդհանրապես, այդպիսի համալսարան գոյություն չունի: Այդ պատճառով կարևորվում է մի շարք մասնագիտությունների գծով մասնագետների պատրաստումն այլ համալսարաններում: Բայց պարզ է, որ մեր երկրի ապագան կախված է Արցախում ուսում ստացած մասնագետների որակից և քաղացիական կեցվածքից: Հենց դրանով էլ կարևորվում է Արցախի պետական համալսարանի դերը մեր հանրապետության զարգացման գործում:

Ինչպիսի՞նն է ուսումնական գործընթացը բուհում:

Համալսարանում ուսումնական գործընթացն իրականացվում է միջազգային չափորոշիչներին համապատասխան:

Առկա բաժնի 1616 ուսանողներից հաշվետու տարում գերազանց առաջադիմություն է ցուցաբերել 89 ուսանող, որը կազմում է ընդհանուրի ավելի քան 5 տոկոսը, «լավ» և «գերազանց» գնահատականներով սովորում է 178 ուսանող կամ ընդհանուր թվի ավելի քան 10 տոկոսը: Այսպիսով, բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների թիվը առկա բաժնում կազմում է 15 տոկոս:

Սակայն հեռակա բաժնում ուսանողների ուսման որակը դեռևս մնում է ցածր: 1322 ուսանեղներից «գերազանց» գնահատականներով սովորողների թիվը կազմում է ընդամենը 19 (1.5 տոկոս), իսկ «լավ» և «գերազանց» գնահատականներով սովորողների թիվը՝ 65 (5 տոկոս):

Ընդհանուր առմամբ, «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողների թիվը (առկա և հեռակա) կազմում է 21.5 տոկոս:

Հաշվետու տարում քիչ չեր անբավարար գնահատականներով սովորողների թիվը: Ուսումնական տարվա արդյունքներով համալսարանից հեռացվել է 154 ուսանող, որից 37-ը՝ առկա բաժնից, 117-ը՝ հեռակա:

Նշված թվերը չեն կարող գոհացնել մեզ: Մենք լուրջ անելիքներ ունենք այս բնագավառում: Մեզ պետք չեն ուռճացված գնահատականներ: Համալսարանում սովորում են ուսանողներ, որոնք իրենց գիտելիքներով չեն գիշում << և այլ երկրների բուհերի ուսանողներին: Այդ են վկայում բազմաթիվ շնորհակալական գրություններն ու վկայականները՝ հասցեագրված համալսարանի ղեկավարությանը ավարտական քննությունների նախագահների և միջբուհական մրցույթների հանձնաժողովների կողմից:

Ուսումնական բնագավառում մեր գլխավոր խնդիրն ուսման որակի բարձրացումն է, և այս ուղղությամբ մի շարք աշխատանքներ են տարվել: Այսպես՝

- շարունակվել է ուսումնական կարինետների, լաբորատորիաների և կենտրոնների ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցումը

- գիտական և էլեկտրոնային գրադարանների գրքային ֆոնդի հարստացումը

- սկսված է համալսարանի դասախոսական կազմի (մինչև 60 տարեկան դասախոսների) վերապատրաստումը: Հատուկ դասընթացներ են ընթանում համակարգչային գիտելիքներ ծեռք բերելու և մեկ օտար լեզու սովորելու ուղղությամբ: Կրեդիտների գումարը, որը կվաստակի տվյալ դասախոսը, հնարավորություն կտա նրան՝ մասնակցելու հայտարարված թափուր տեղերի համար մրցույթներին:

- շարունակվել է դասախոսների հրավիրումը մոդուլային տարբերակով դասընթացներ վարելու նպատակով:

- Լուրջ աշխատանք է տարվում ուսանողների գիտելիքների ստուգման ուղղությամբ: Համալսարանում սկսել է գործել գիտելիքների ստուգման կենտրոնը՝ 37 համակարգիչներով: Կան տեսակետներ, որ այս տարբերակով ուսանողների գիտելիքների ստուգումը կարող է հանգեցնել դասախոսների պատասխանատվության նվազեցման: Ես հակառակ

կարծիքին եմ: Եթե տվյալ պահին նա չի գտնվում գնահատման կենտրոնում, դա չի նշանակում, որ ինքը չի մասնակցում: Դասախոսը պատասխանատու է տվյալ առարկայի թեստերի քանակի և, որ գլխավորն է, դրանց որակի համար: Նա պատասխանատու է ուսանողի առջև՝ բոլոր առումներով:

Արդի ժամանակաշրջանում լուրջ խնդիրներ են ծագում ապագա մասնագետների առջև՝ կապված օտար լեզուների իմացության հետ: Խոսքը վերաբերում է ոչ մասնագիտական խմբերում սովորողներին: Եթե ռուսերենին արցախցին ավանդաբար վատ չէ տիրապետում, ապա նույնը չենք կարող ասել անգլերենի և այլ լեզուների վերաբերյալ: Մի շարք մասնագիտությունների գծով ուսանողները (քաղաքագիտություն, իրավագիտություն, տնտեսագիտություն, լրագրություն և այլն) բավարար չափով տիրապետում են անգլերենին, իսկ իրավագիտության բաժնի 3-4-րդ կուրսերի ուսանողները ուսումնական-դաստական նիստ են վարում նույնիսկ անգլերեն լեզվով: Մյուս մասնագիտությունների հարցում վիճակը, մեղմ ասած, տխուր է:

Մեր կարծիքով՝ կան պատճառներ, որոնք ինչ-որ տեղ դժվարացնում են օտար լեզվին տիրապետելու գործընթացը:

Մեծ թիվ են կազմում այն ուսանողները, որոնք դպրոցում ընդհանրապես օտար լեզու չեն ուսումնասիրել: Ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակը շատ քիչ է դրա համար՝ ընդամենը 4 ժամ առաջին կուրսում:

Նշված խնդիրը լուծելու համար հատուկ 3-4-րդ կուրսերի ոչ մասնագիտական խմբերի համար կազմակերպվել են դասընթացներ: Այս պահին գործում են 6 խմբեր՝ 10-15 ուսանողներով:

Զարգացման ծրագրի շրջանակներում հանրապետության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման նպատակով երիտասարդությանը խրախուսելու և հանրապետությունում ամրագրվելու պահանջով վերջին

Երեք տարում համալսարանում բացվել են ժամանակակից պահանջարկ ունեցող մասնագիտություններ: Դրանք են՝ հեռահաղորդակցություն, կառավարման ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, ընդերքների և հանածոների հետազոտում և մշակում, ռազմական հոգեբանություն և մանկավարժություն, տնտեսագիտության տեսություն:

Հաշվետու տարում համալսարանն ավարտել են 941 ուսանողներ՝ 30 մասնագիտությամբ, որոնցից 578-ը՝ առկա ուսուցմամբ, 363-ը՝ հեռակա: Գերազանցության դիպլոմ ստացել են առկա բաժնի 54 շրջանավարտներ՝ մոտ 10 տոկոս, հեռակա բաժնից՝ ոչ մեկը:

Անելիքներ ունենք ավարտական (նախկինում պետական) քննությունների կազմակերպման և անցկացման գործում: Ավարտական քննությունը, որպես այդպիսին, կորցրել է իր արդիականությունը՝ հաշվի առնելով այն, որ շրջանավարտն ուսուցման չորս տարիների ընթացքում արդեն հավաքել է համապատասխան կրեդիտներ բոլոր դասընթացներից, այդ թվում նաև այն առարկայից, որը նշանակված է որպես ավարտական: Ստացվում է՝ նույն առարկայից ուսանողին կրեդիտներ տրվում են երկու անգամ, ինչը հակասում է կրեդիտային համակարգով կազմակերպվող ուսումնական գործընթացին:

Լուրջ ուշադրություն է պահանջում մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացը: Այստեղ կարելի է կիրառել թեկնածուական թեզերի պաշտպանության մեթոդ, այսինքն՝ գնահատական չտալ, այլ հանձնաժողովի կողմից տրվող ծայներով (բաց կամ փակ քվեարկությամբ) շնորհել կամ չշնորհել մագիստրոսի աստիճան:

Համալսարանում լուրջ ուշադրություն է դարձվել նաև փորձուսուցման գործընթացին: Այն անց է կացվում մայրաքաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում և շրջաններում, հատկապես այն գյուղերի

դպրոցներում, որոնց շրջանավարտն է եղել ուսանողը, ինչպես նաև՝ «Հիմնարկ-ձեռնարկություններում և կրթական օջախներում:

Զգալի աշխատանք է կատարված ուսանողների սոցիալական վիճակի բարելավման ուղղությամբ: Ավարտվել է ուսանողական հանրակացարանի 44 սենյակների վերանորոգումը, որը համապատասխանում է ուսանողական կենցաղի համար անհրաժեշտ բոլոր պահանջներին: Այժմ հանրակացարանում բնակվում է 112 ուսանող:

Թույլ տվեք շնորհակալություն հայտնել հանրակացարանի վերանորոգման աշխատանքների հովանավոր դոկտոր Ալբերտ Մելիք-Ղասումյանին և այդ աշխատանքների կազմակերպիչ Ստեփան Նալբանդյանին: Շնորհակալություն ենք հայտնում նաև կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանին՝ այդ հարցում աջակցելու համար:

Համալսարանում գործում է վճարների փոխհատուցման և զեղչերի համակարգ ինչպես կառավարության, այնպես էլ՝ համալսարանի կողմից սահմանված կարգով: Կառավարության կողմից ուսման վճարների փոխհատուցում է կատարվել 186 ուսանողների համար՝ 30.2 միլիոն դրամի չափով: Համալսարանի կողմից ուսման վճարների 25 տոկոս զեղչ է կատարվել 410 ուսանողի համար՝ շուրջ 30.1 միլիոն դրամի չափով: Միանվագ օգնություն և խրախուսանք է ցույց տրվել 65 ուսանողի՝ 779.2 հազար դրամի չափով:

Խորհրդի հարգելի անդամներ, մի քանի խոսք դասախոսական կազմի մասին: Բուհում ուսումնական գործընթաց են վարում 332 դասախոս, որից 18-ը գիտության դոկտոր-պրոֆեսորներ են, իսկ 115-ը գիտության թեկնածու-դոցենտներ: 130 դասախոս աշխատում է ժամավարձային հիմունքներով: Նրանք հանրապետության տնտեսության, ՊԲ, իրավապահ մարմինների, սոցիալ-տնտեսական ոլորտի և այլ բնագավառների առաջատար մասնագետներ են, մի մասը՝ գիտական կոչումներով: Ուսումնական գործընթացին ակտիվորեն մասնակցում են ՀՀ և ՌԴ

բուհերից հրավիրված դասախոսները: Հաշվետու տարում ԱրՊՀ են գործուղվել 20 դասախոսներ ՀՀ –ից և ՌԴ-ից: Համալսարանի դասախոսներն, իրենց հերթին, հրավիրվում են դասախոսելու ՀՀ բուհերում, ինչպես նաև ընդդիմախոսելու թեկնածուական և դոկտորական թեզերի պաշտպանությանը:

Հաշվետու տարում 6 ասպիրանտ և հայցորդ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն: Իսկ սկսած 2008թ.՝ առ այսօր համալսարանի դասախոսները, ասպիրանտներն ու հայցորդները պաշտպանել են 42 թեկնածուական և 3 դոկտորական թեզ: Մինչև ուսումնական տարվա ավարտը նախատեսվում է ևս 3 դոկտորական և 5 թեկնածուական թեզերի պաշտպանություն:

Խորհրդի հարգարժան անդամներ, հաշվետու տարում չի դադարել պայքարն արատավոր, կոռուպցիոն երևոյթների դեմ: Զարագործներն իսկույն հեռացվել են աշխատանքից: Համալսարանի կոլեկտիվը հստակ իրազեկված է, որ այդ հարցում ներում չի լինելու: Ուզում եմ ընդգծել, որ այդ ուղղությամբ լուրջ արդյունքներ ունենք:

Հաշվետու տարում որոշակիորեն բարելավվել է պրոֆեսորադասախոսական կազմի սոցիալական վիճակը: Աձել է աշխատավարձի չափը: Այսօր գիտության դոկտոր-պրոֆեսորի աշխատավարձը կազմում է 231.1 հազար դրամ, իսկ գիտության թեկնածու-դոցենտինը՝ 169.6 հազար դրամ

Միանվագ օգնություն է տրվել 12 անձանց՝ 1.121.5 հազ. դրամի չափով: 2012թ. համալսարանի կոլեկտիվը խրախուսվել է երկու անգամ՝ մայիսյան եռատոնի և Ամանորի կապակցությամբ, ընդհանուր առմանք՝ 13.230.000 հազ. դրամի չափով՝ աշխատավարձերին հատկացրած տնտեսումի հաշվին: Օգնություն է ցույց տրվել մահացած աշխատողների ընտանիքներին:

Խորհրդի հարգելի անդամներ, համալսարանի կոլեկտիվի (Ուսանողների, աշխատողների) սոցիալական վիճակի բարելավումը պահանջում է ավելի մեծ ուշադրություն: Ուսանողներին անհրաժեշտ են հանրակացարանային նոր տեղեր, դասախոսներին՝ 1-2 սենյականոց ծառայողական բնակարան, որը հնարավորություն կտա համալսարան հրավիրելու ձանաչված գիտնականների՝ երկարաժամկետ աշխատանք ծավալելու նպատակով: Նշված խնդիրը մեղմացնելու համար խնդրում ենք համալսարանին հատկացնել հողատարածք քաղաքի սահմաններում: Կարծում եմ՝ մենք հնարավորություն կունենանք տարեկան 2-3 երկուսենյականոց բնակարան կառուցելու:

### **Գիտամեթոդական աշխատանք**

Համալսարանի դասախոսական կազմի կողմից կատարվել է ոչ քիչ աշխատանք: Տպագրվել են «Գիտական տեղեկագրի» սահմանված երկու համարները, «Հայագիտական հանդեսի» 2-րդ համարը: Հրատարակվել է կենսաբանության ամբիոնի դասախոսների կողմից պատրաստված կենդանական աշխարհի՝ «Ղարաբաղի կարմիր գիրքը» արժեքավոր աշխատությունը (հայերեն-ռուսերեն լեզուներով):

Մեր դասախոսների աշխատությունները հրատարկվել են ՀՀ և արտերկրի հեղինակավոր տեղեկագրերում: Ընդհանուր առմամբ հրատարկվել է 263 աշխատություն, այդ թվում՝ դասագրեր, մենագրություններ, մեթոդական ձեռնարկներ:

Համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել 18 անուն գիրք՝ 170.5 տպագրական մամուլ ծավալով:

Հաշվետու շրջանում համալսարանում անց են կացվել Շուշիի ազատագրման 20-ամյակին նվիրված մի շարք միջոցառումներ և

միջազգային գիտաժողովներ: 2012թ. հունիս ամսում << ԴԱԱ, Երևանի և Արցախի պետական համալսարանների համատեղ ուժերով տեղի է ունեցել Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային արժեքներին նվիրված միջազգային գիտաժողով, որին մասնակցում էին 50-ից ավելի հայտնի գիտնականներ <<-ից և արտերկրից: Նշված տարում կրթության և գիտության նախարարության հետ համատեղ անց է կացվել նաև «Русское слово» միջազգային փառատոնը:

Ուսումնական և գիտամեթոդական աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար իր տեղն ունի համալսարանի գրադարանը:

Գրադարանի գրքային ֆոնդն ավելացել է շուրջ 4610 անուն գրքով, և այսօր այն կազմում է 95.000 միավոր գիրք: Էլեկտրոնային գրադարանում գրանցված է շուրջ 380.000 միավոր գիրք, որն անցյալ տարվա համեմատությամբ ավել է շուրջ 5700 միավորով: Ընթերցողների թիվը կազմում է 4718:

2012թ. գրադարանը ստացել է 59 անուն գիրք, թերթ և ամսագրեր:

Գրքային ֆոնդի հարստացման գործում իրենց ավանդն են ունեցել <<Գիտությունների ազգային ակադեմիան, մեր հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

## ***Նյութատեխնիկական բազա***

Համալսարանի գիտառումնական գործընթացի ապահովման համար մեծ է նյութատեխնիկական բազայի զարգացման դերը:

Շահագործման է հանձնվել համալսարանի՝ գիտելիքների ստուգման կենտրոնը:

Տնտեսահրավարանական ֆակուլտետի համար բացվել է ուսումնադատական նիստերի դահլիճ: Ֆիզիկական կուլտուրայի և ՆՈՊ ֆակուլտետում բացվել է քաղաքացիական պաշտպանության մասնագիտական կաբինետ: Հայ բանասիրության և լրագրության ֆակուլտետի համար ստեղծվել է հեռուստաստուդիա:

Շուտով կավարտվեն ֆիզմաթ ֆակուլտետի համար լաբորատոր համալիրի ստեղծման աշխատանքները: Մի շարք լսարաններում կատարվել են վերանորոգման աշխատանքներ:

Մաթեմատիկայի և ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնը տեղափոխվել է նոր, կահավորված սենյակ՝ կից գործող կաբինետով:

Առաջին մասնաշենքի առաջին հարկում կատարվել է համապատասխան աշխատանք՝ ուսանողների և աշխատողների անվտանգության ապահովման ուղղությամբ: Աշխատանքներ են կատարվել հիմնական մասնաշենքի բակի բարեկարգման ուղղությամբ: Զլուծված է մնում առաջին մասնաշենքի աջ թևի վերանորոգման խնդիրը:

Տեղադրվել են 53 նոր համակարգիչներ, 5 պրոեկտորներ, պատճենահանման սարքեր և այլ տպագրական տեխնիկա:

## Արտաքին կապեր

Արտաքին կապերի ընդլայնումը և համագործակցությունն այլ երկրների բուհերի հետ համալսարանի գարգացման լուրջ գործոններից է:

Համալսարանի ուսանողական հավաքականները սպորտի տարբեր ձևերում շարունակում են առաջնային տեղեր զբաղեցնել ՀՀ բուհերի շարքում: ՀՀ-ում կայացած ինտելեկտուալ խաղերում իրեն արժանավայել է դրսնորել համալսարանի ուսանողական թիմը:

Համալսարանը միջբուհական կապերի մեջ է Ռուսաստանի Դաշնության մի շարք բուհերի և գիտական հիմնարկների հետ, այդ թվում՝ Մոսկվայի ժողովուրդների բարեկամության պետական համալսարանի, Սանկտ-Պետերբուրգի տնտեսաճարտարագիտական համալսարանի, Նիժեգորոդի Լոբաչևսկու անվան համալսարանի, Մոսկվայի կենտրոնական տնտեսավիճակագրական ինստիտուտի, Վլադիմիրի և Սարատովի պետական համալսարանների հետ:

Ներկայումս ԱրՊՀ-ն սերտ կապերի մեջ է Աբխազիայի Մերձնեստրյան և Հարավ-Օւթական պետական համալսարանների հետ, որոնց հետ դեռևս 2007թ. ստեղծել է ինքնորոշված պետությունների համալսարանների ասոցացիան: Հարկ է նշել, որ 2011-12 ուս.տարվա ընթացքում ԱրՊՀ-ում տեղի է ունեցել ասոցիացիայի հերթական նիստը, որին մասնակցել են Մերձնեստրյան և Աբխազիայի պետական համալսարանների պատվիրակությունները: ԱրՊՀ-ում այդ կապակցությամբ բացվել է Եղբայր համալսարանների համագործակցության կենտրոն:

Հաշվետու տարում համալսարան են այցելել Սլովակիայի Ստալիցկա քաղաքի պետական համալսարանի պատվիրակությունը՝ ռեկտորի գլխավորությամբ, Գերմանիայի Դաշնության Յենայի հինավորց համալսարանի և Շվեյցարիայի ժողովրդական ժողովի պատվիրակությունները:

Վերոհիշյալ ձեռնարկումները, համոզված եմ, կնպաստեն համալսարանի դերի և հեղինակության բարձրացմանը, անհրաժեշտ հիմք կնախապատրաստեն՝ ինտեգրվելու միջազգային գիտակրթական արդի պահանջներին, ինչպես նաև հնարավորություն կտան հնչեցնելու միջազգային ասպարեզում մեր հանրապետության անունը՝ դրանով իսկ նպաստելով նրա միջազգայն ձանաշմանը:

Հաշվետու տարում կանոնավոր աշխատել են համալսարանի ղեկավար մարմինները: Ուկտորատն անց է կացրել 33 միստ, որտեղ քննարկվել է շուրջ 70 հարց:

Գիտական խորհուրդ իրավիրվել է 5 անգամ, որի ընթացքում քննարկվել է 28 հարց, ընդունվել է 4 կանոնակարգ, անց են կացվել 2 ընտրություններ, որոնց ժամանակ ընտրվել են 2 պրոֆեսորներ, 3 դոցենտներ, 16 ավագ դասախոսներ և 1 ամբիոնի վարիչ:

Համալսարանի դասախոսական և ուսանողական կոլեկտիվներն ակտիվորեն մասնակցել են հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին: 2012թ., մասնակցելով հեռուստամարաթոնին, «Հայաստան» համահայկական հիմնադրամին է փոխանցվել 1,350 հազ. դրամ:

Արցախի պետական համալսարանը միշտ էլ բարձր է գնահատել իր բարեկամների և բարերարների ներդրումը համալսարանի զարգացման գործում:

Հարկ է նշել ամերիկահայ բարերար դոկտոր Ալբերտ Մելիք-Ղասումյանի և ՌԴ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Աբել Գեղի Աղանբեկյանի անունները՝ առաջինը, ինչպես վերը նշվեց, հանրակացարանի վերանորոգման, իսկ երկրորդը՝ կոնֆերենց-դահլիճի ստեղծման ծրագրերն իրականացնելու կապակցությամբ:

Հաշվետու շրջանում համալսարանի և կրթության և գիտության նախարարության միջև հարաբերություններն ընթացել են աշխատանքային մթնոլորտում, փոխադարձ ըմբռնումով:

Այսպիսով, ամփոփելով ևս մեկ ուսումնական տարի, հստակ կարող ենք նշել, որ համալսարանի զարգացման ծրագիրը, որն հաստատվել է 2009թ., արդեն իսկ կարելի է համարել իրականացված:

ԼՂՀ մեծարգո վարչապետ, խորհրդի հարգարժան անդամներ.

Հավաստիացնում եմ, որ Արցախի պետական համալսարանի ողջ կոլեկտիվը գիտակցում է իր առջև դրված խնդիրների լուծման կարևորությունը՝ դրանց իրականացումը համարելով մեր հանրապետության զարգացման իրական երաշխիքներից մեկը:

Ծնորհակալություն: